

ՖԵԼԻՔՍ ՄՈՎՍԻՍՅԱՆ

Պարմական գիտությունների թեկնածու, դոցենտ

«ՄԱՍՅԱՑ ԱՂԱՎՆԻ» ՊԱՐԲԵՐԱԿԱՆԸ ԼԵՆԱԿԱՆ 1863-1864 Թ-Թ. ԱՊՍԱՄԲՈՒԹՅԱՆ ՄԱՍԻՆ

Լեհական 1863-1864 թվականների ապստամբությունը ազգային-ազատագրական շարժում էր, որն ընդգրկեց Թագավորական Լեհաստանը, Լիտվան, մասամբ մաս Բելոռուսիան ու Աջափնյա Ուկրաինան: Այն ուղղված էր ցարիզմի դեմ և հանդիսացավ հանուն ազգային ու սոցիալական ազատագրման լեհ ժողովրդի երկարատև և համառ պայքարի բարձրագույն փուլը: Ապստամբության հիմնական պատճառը լեհ ժողովրդի ձգտումն էր՝ վերականգնել Լեհաստանի ազգային անկախությունը, իրականացնել սոցիալ-քաղաքական արմատական վերափոխումներ, հասնել երկրի բոլոր քաղաքացիների ազատությանն ու իրավահավասարությանը:

Լեհ ժողովրդի պայքարը չկրեց մեղ, ազգային բնույթ, այլ ձեռք բերեց համաեվրոպական մշակակություն՝ դառնալով եվրոպական մեծ տերությունների դիվանագիտական հարաբերությունների առանցքը:

Լեհական ապստամբությունը լայն արձագանք գտավ արևելահայ հասարակական մտքում և պարբերական մամուլում: Ցարական Ռուսաստանում լեհական ապստամբության տարիներին հրատարակվող վեց պարբերականներից չորսը ամդրադարձան ապստամբությանը: Այդ պարբերականները մերկայացնում էին արևելահայ ազգային-պահպանողական հոսանքը: Նրանցից «Մեղու Հայաստանի» թերթը ամբողջ 1863 թ. ընթացքում եվրոպական և ռուսական մամուլի մյուսների հիման վրա լուսաբանեց ապստամբությունը՝ առանց իր դիրքորոշումը հստակ բացահայտելու: Թերթը զգույշ էր լեհերի պայքարի գնահատականի հարցում և փորձում էր իր վերաբերմունքը դրսևորել՝ ակնարկներ անելով կամ էլ եվրոպական մամուլի դիրքորոշումը մեջբերելով:

«Հյուսիս» և «Համբավաբեր Ռուսիո» պարբերականները բացահայտ չէին համակրում լեհերի պայքարը, քանի որ այն ուղղված էր ցարական Ռուսաստանի դեմ, իսկ իրենք ռուսամետ էին:

«Համբավաբեր Ռուսիոյի» խմբագիր, Մոսկվայի հայերեն հրատարակությունների գրաքանիչ Ջարմայր Մսերյանը զարմանում էր, որ «ազատություն» և «արտոնություններ» ունեցող լեհերը համարձակվել են հանդես գալ «քարեշնորհ» ցարի դեմ: Նա ցանկություն էր հայտնում, որ ռուսաց կառավարությունից շատ ջանք չպահանջվի «չարության արմատը»՝ լեհական ապստամբությունը, ոչնչացնելու և Ռուսաստանում «խաղաղությունը և անդորրությունը կրկին հաստատելու համար»¹:

¹ «Համբավաբեր Ռուսիո», 1863, թիվ 48, «կիսամյա տեսություն»:

Այս պարբերականների խմբագիրները լեհերի պայքարը չդրվատելու իրենց «պատմական հիմնավորումն» ունեին: Նրանք չէին կարողանում մերել լեհերին այն բանի համար, որ 17-րդ դարում բռնի կրոնափոխ արեցին 40 հազար ընտանիքներից բաղկացած լեհահայերին, որոնցից շատերը դարձան տարագիր Եվրոպայով մեկ:

Եթե «Համբավաբեր Ռուսիո» և «Հյուսիս» պարբերականները լեհերի պայքարը չդրվատելու իրենց հայեցակետն ունեին, որոնք շատ մեծ էին միմյանց, ապա այլ մոտեցում ունեւ արևելահայ ազգային-պահպանողական հոսանքը մերկայացնող մեկ այլ պարբերական՝ «Մասյաց աղավմի» ամսագիրը:

Այն հրատարակվում էր 1855-1858 թթ. մախ Փարիզում, ապա՝ 1860-1865 թթ. Թեոդոսիայում: Սկսած 1860 թ. այն լույս էր տեսնում «Մասյաց աղավմի և Ծիածան Հայաստանյաց» վերնագրով՝ մանկավարժ, պատմաբան, թարգմանիչ և եկեղեցական գործիչ Գաբրիել եպս. Այվազովսկու խմբագրությամբ:

Թեև այս պարբերականի մպատակն էր՝ իր ընթերցողներին ծանոթացնել եվրոպական քաղաքակրթության և գիտության նվաճումներին, մպատել ժողովրդի բարոյական դաստիարակությանը, այնուամենայնիվ ամսագիրն անտարբեր չէր մահ Եվրոպայի քաղաքական իրավիճակի հանդեպ:

Ամսագիրը 1863 թ. համարներում լուրջ տեղ է հատկացնում լեհական ապստամբությանը, որի վերաբերյալ մյուսերը տպագրում է «Փարիզյան սուրհանդակ» խորագրի ներքո: Այս խորագրում պարբերաբար զետեղվում էին ամենատարբեր լուրեր Եվրոպայում կատարվող քաղաքական իրադարձությունների շուրջ: Դրանք ստացվում էին Ֆրանսիայից՝ ամսագրի փարիզյան թղթակցից: Ամսագրի խմբագիր Գաբրիել Այվազովսկին մեծ տեղ էր հատկացնում Ֆրանսիայի քաղաքական և մշակութային կյանքին ոչ միայն այն ժամանակ, երբ ամսագիրը հրատարակվում էր Փարիզում, այլև Թեոդոսիայում լույս տեսնելու տարիներին: Ամսագիրը լույս էր տեսնում հայերեն և ֆրանսերեն: Ֆրանսիայի հետ մշտապես առնչվելու հանգամանքը, ֆրանսիական թեմատիկայի մշտական առկայությունը ամսագրի էջերում իր կնիքն էր թողնում մահ լեհական ապստամբության մեկնաբանման հարցում: Ապստամբության վերաբերյալ Փարիզից ստացվող լուրերի մեծամասնությունը հաղորդվում էին ֆրանսիական իշխանությունների և հասարակայնության տեսանկյունից:

Ապստամբության մասին առաջին մյուս ամսագիրը տպագրում է 1863 թ. հունվարին Վարշավայից ստացված հեռագրալուրի հիման վրա, որը տեղեկացնում էր ապստամբության բռնկման մասին:

«Ռուսաստան առաջընթաց վիճակի մեջ է, - գրում է «Մասյաց աղավմին», և ավելացնում, - և թեպետ լեհաց հոգիքը բռնկած են և հեռագրալուր մը Վարշավի մեջ մեծ դավաճանության մը լուր կուտա, բայց այս ևս կիմացնե, թե հետևանք չէ ունեցած»²:

Բնականաբար սա ռուսական լրատվությունն էր, որը շտապում էր հավաստիացնել, թե ապստամբությունը ռուսական կայսրության համար հետևանքներ ունենալ չէր կարող: «Մասյաց աղավմին» այդ լուրը տպագրում է առանց որևէ մեկնաբանության և դիրքորոշում ցույց տալու: Չնայած ապստամբությունը մոր էր սկսվել և մրա հետագա ընթացքը պարզ չէր, սակայն «Մասյաց աղավմին» ճիշտ է ընկալում ապստամբության մպատակն

² «Մասյաց աղավմի» 1863, 11 հունվարի, էջ 27:

ու մրա հմարավոր հետևանքները ռուսական կայսրության համար: Ամսագրի կարծիքով լեհերը ձգտում էին ազատություն ստանալ, որը կհանգեցներ ռուսական կայսրության ասահմանների փոփոխության:

«Գերյաց ազատության մեծ գործը, - շարունակում է «Մասյաց աղավմին», - որ տերության կերպարանափոխություն պիտի տա, հարկավ թիչ մը ծփանք կպատճառե, մինչև որ իր հավասարակշռությունը գտնե»³:

Փաստորեն ամսագիրը համոզված էր, որ բռնկված ապստամբությունը Ռուսաստանի մի թիչ անհանգստություն կպատճառի, որից հետո միայն ամեն ինչ իր մախկին փնտրանքներին կվերադառնա: Ասել է, թե ապստամբությունը կհանգեցնի, երկրի անդորրը կվերականգնվի, Ռուսաստանի տարածքային ամբողջականությունը կպահպանվի:

Լեհական ապստամբության բռնկման մասին այլ կարծիք ունեւ «Մեղու Հայաստանի» պարբերականը: Լեհաստանից ստացված առաջին լուրերի հիման վրա թերթը հայտնում էր որ «աստամբության գլխավոր պատճառները, բացի քառանգներից, ազատներ և մանր կալվածատերերն են»⁴: Թերթն այնուհետև հայտնում էր, որ կաթոլիկ վանքերի կրոնավորները վանքերի ամբողջ ոսկեղենը, արծաթեղենն ու կահկարասին մվիրում են ապստամբության կարիքների համար⁵: Ժարունակելով ընդգծել քառանգների ակտիվ դերը ապստամբության գործում, թերթը հայտնում է, որ գյուղերում հավաքվում են ապստամբների մեծ բազմություն, որտեղ «քառանգները և կալվածատերերը, ոչ միայն համոզում են ժողովրդին և հրեաներին, այլև ստիպում են մրանց մասնակից լինելու խռովությանը»⁶:

Լեհական ապստամբության մեջ, ինչ խոսք, կրոնական փաստն առկա էր: Ապստամբության սկզբնական շրջանում Լեհ Եկեղեցին հանդես էր գալիս որպես դավանանքով կաթոլիկ արմատական բնակչության բոլոր շերտերը կապող օղակ: Կոստյուլներն ու վանքերը հանդիսանում էին յուրատեսակ կենտրոններ, որտեղ ժողովուրդը հավաքվում ու ազատություն էր տալիս իր ազգային զգացմունքներին: Ազգային-ազատագրական շարժման մեջ կրոնական մրբերանգն առաջ բերեց մույմիսկ հեղափոխական խորհրդանիշ: Լեհ ապստամբները կրում էին խաչի ու Աստվածամոր պատկերով գնդախեղ-կրծքանշաններ, մետաղյա կրծքախաչեր՝ խաչված Հիսուսի պատկերով, որոնց վրա գրված էր. «Աստված, փրկիր մեզ» կամ «Աստված, փրկիր Լեհաստանին» և այլն:

Ապստամբության զինանշանների վրա պատկերվում էին Աստվածածինն ու Միքայել հրեշտակապետը⁷: «Աստված, փրկիր Լեհաստանին» բառերով էին ավարտվում լեհ, լիտվացի, բելոռուս և ուկրաինացի ժողովուրդներին ուղղված կենտրոնական Ազգային Կոմիտեի ու գալիստային կոմիտեների գրեթե բոլոր ուղերձներն ու դիմումները: Լեհ քառանգները գործում մասնակցություն ունեին ապստամբության ամբողջ ընթացքում: Բայց այս ամենը չէր մշանակում, թե ապստամբության պատճառը դավանական բնույթի էր:

³ Նույն տեղում:

⁴ «Մեղու Հայաստան», 1863, թիվ 5, էջ 43:

⁵ Նույն տեղում, 1863, թիվ 8, էջ 76:

⁶ Նույն տեղում, 1863, թիվ 6, էջ 51:

⁷ Ю. М. Штаткеберг. Об эмблематике польского восстания 1863г., в сб: «Связи революционеров России и Польши в XIX – начале XX века» М., 1968, стр. 81–95.

Հոռմի Կաթոլիկ Եկեղեցին մուսուլման լեհական ապստամբությունն այս կերպ էր մեկնաբանում:

Հոռմի Պիոս IX պապը սկզբնական շրջանում լեհերի ապստամբությունը համարում էր «խելահեղություն, մաձձիմիզմ և հեղափոխականություն», բայց արևմտյան տերություններին միջամտությունից հետո միացավ մրանց և ապրիլի 22-ին ռուսական ցարին դիմեց ուղերձով: Պապը մշտում էր, որ Լեհաստանում մշտական հուզումների հիմնական պատճառը հանդիսանում է Կաթոլիկ Եկեղեցու շահագործումը, հոգևորականների հետապնդումը, վաճառքի ու եկեղեցիների փակումը, մրանց հողերի բռնագրավումը, հոգևորականության Հոռմ այցելության արգելքը և այլն: Պիոս IX-ը հույս էր հայտնում, որ ցարն ինչ-որ բան կամի Կաթոլիկ Եկեղեցու հանգստության համար, ինչն էլ կմպաստի լեհ ժողովրդի հնազանդությանը⁸:

Փաստորեն պապը չէր մտահոգվում լեհերի ազատության հարցով, այլ անհամապատասխան էր Կաթոլիկ Եկեղեցու համար:

Լեհական ապստամբության մեջ կրոնական հանգամանքը կարևորող «Մեղու Հայաստանի» պարբերականի խմբագիր Պետրոս Սիմեոնյանը ապստամբության բռնկման պատճառների կապակցությամբ թերթի էջերում բանավեճ սկսեց «Համբավաբեր Ռուսիո» պարբերականի խմբագիր Զարմայր Մսերյանի հետ:

Խոսելով «Համբավաբերի» խմբագրի քաղաքական հայացքների մասին, «Մեղու Հայաստանի» ծաղրանքով մկատում է, որ լուսավորյալ մարդը 17-րդ դարի աչքերով չպետք է նայի ժամանակակից դեպքերին: Թերթը գրում է. «Իսկ ինչ որ կվերաբերի պարոնի քաղաքական հայեցվածքին Եվրոպայի այժմյան վիճակի վերա, բոլորովին ժամանակակից լուսավորյալ մարդու հայեցվածք չէ այն, այլ մա 17-րդ դարու աչքերով է նայում մորա վերա, մոռանալով, որ 17-րդ դարից մինչև ցայժմ Եվրոպայի ազգերը գրեթե բոլորովին կերպարանափոխ են եղել. ո՛չ միայն քաղաքականությունն է մույնը և ո՛չ էլ հասկացությունը, այն իդեաները, որոնք այժմ տիրապետող են եվրոպացվոց մեջ, այն ժամանակ ըստ մեծի մասին դեռ անհայտ էին մրանց»⁹:

Որպես իր մտքի ապացույց, Պ. Սիմեոնյանը վկայակոչում է «Համբավաբեր Ռուսիոյի» խմբագիր Զարմայր Մսերյանի տպագրած հոդվածը թերթի թիվ 48-ում՝ լեհական ապստամբության պատճառների մասին: Ըստ այդ հոդվածի Զ. Մսերյանը «լեհաց ապստամբության պատճառը մոցա կրոնամոլությունն է դնում և իբրև ապացույց այս կրոնամոլության, առաջ է բերում մեր Մովսես Կաթողիկոսի Լեհաց Վլադիսլավ թագավորին ուղղած կոնդակը 1632-ին, հենց կարծես այժմյան լեհերը և այն ժամանակվա լեհերը կարող են միևնույնը լինել, իրենց հասկացողության և իրերի վերա, ունեցած հայեցվածքի կողմանե: Պարոնը իր այնպիսի հայեցվածք ունենալու իրավունքը դնում է մրանում, որ 40.000 տուն հայ կորել են Լեհաստանում, ուստի և ինքը երևի շարժված չափազանց ազգասիրությունից, չէ կարող լավ խոսել լեհերի վերա»¹⁰:

⁸ М. В. Мяско. Указ. соч., стр. 204.

⁹ «Մեղու Հայաստանի», 1863, թիվ 44, էջ 392:

¹⁰ Նույն տեղում:

Իր հերթին Ջ. Մսերյանը մեղադրում է «Մեղու Հայաստանի» խմբագրին նրանում, որ նա կանխամտածված, այլ կերպ է մեկնաբանում իր արտահայտած մտքերը: «Ով որ կարդա «Համբավաբերի» մինչև ցայոթ հրատարակված համարները, - գրում է Ջ. Մսերյանը, - նա կարող է հասկանալ Ձեր գրության ըստ ամենայնի անհիմն լինելը. կարող է տեսանել՝ թե Դուք իմ հոդվածների միտքը ծուր-ծոմոթքում եք՝ տալով ըստ ամենայնի իմ ասածների հակառակ միտք և բացատրություն»¹¹:

Պ. Սիմեոնյանը թյուրիմացության մեջ էր և անհիմն էր հանդիմանում, թե «Համբավաբերի» խմբագիրն ապստամբության պատճառը համարում է կրոնական հարցը: Ջ. Մսերյանը կտրականապես հերքում է դա, քանի որ երբեք այդ կարծիքին չի եղել: Դիմելով Պ. Սիմեոնյանին, նա գրում է. «Դուք, պ. խմբագիր, ասում եք՝ թե լեհաց ապստամբության պատճառ դնում եմ ես կրոնամոլությունը: Այդ սուտ է ըստ ամենայնի. Լեհաց ապստամբության պատճառը կրոնը կամ ըստ Ձեր գրելոյն կրոնամոլությունը չէ, այլ անցա ցանկությունն է ազատվելու Ռուսիո ձեռքեն՝ կազմելով առանձին պետություն»¹²:

«Համբավաբերի» խմբագրի դիրքորոշումն այս հարցում ճիշտ էր, քանի որ լեհերն իսկապես ձգտում էին անկախության: Վստահ լինելով իր դիրքորոշման ճշմարտացիության մեջ, Ջ. Մսերյանն այնուհետև մեջբերում է կատարում իր հոդվածից՝ փորձելով հիմնավորել, որ ապստամբության պատճառը կրոնական հարցը համարելու միտքն իրեն չի պատկանում և որ ինքը վկայակոչել է լեհ ապստամբների ու քառահազարի ասածը: Պ. Սիմեոնյանն իսկապես աղավաղում էր Ջ. Մսերյանի միտքը: Իր հոդվածում վերջինս բոլորովին այլ բան էր գրում:

«Ես իմ հոդվածի մեջ ասում եմ, - գրում է Ջ. Մսերյանը, - Լեհաստանի ապստամբության գլխավոր պատճառը, եթե նայինք նույնիսկ ապստամբելոց և կամ անցա քառահազարի խոսքին է՝ որպես թե ազատել Եկեղեցին Ռուսաց ձեռքեն, Եկեղեցին, որ որպես թե՝ չունի իրենան սեպհականյալ ազատությունը և գտանում է ծանր լուծի տակ»:

Հոդվածում ավարտելով լեհ ապստամբների խոսքի մեջբերումը, Ջ. Մսերյանը շարունակում է պարզաբանել իր միտքը: Նա գրում է. «Եվ հետո ցուցանում եմ թե այդ պատճառը ըստ ամենայնի անհիմն է, որովհետև Ռուսիո մեջ անցա Եկեղեցին, որպես և մերն՝ ունին լիակատար ազատություն և հետո, ավելացնում եմ և այն, թե ընդհակառակն պատմությունը ցուցանում է՝ թե անցա ձեռաց տակ գտանված եկեղեցիքը՝ հին ժամանակում չեն ունեցած ազատություն և օրինակ այս բանիս բերած եմ այն մեր ազգայինը՝ որ կորան Լեհաստանի մեջ՝ չնայելով մեր կաթողիկոսաց միջնորդությանը»¹³:

Իր այս միտքը հիմնավորելու համար, Ջ. Մսերյանը վկայակոչում է նաև իր մյուս հոդվածը, որ տպագրվել է Ռուսաստանի արտաքին գործերի նախարարության «Journal de St. Petersburg» լրագրի 1863 թ. հոկտեմբերի 25-ի համարում:

«Համբավաբերի» խմբագիրն այն կարծիքին է, որ Լեհ Եկեղեցին բոլորովին էլ կախված չէր Ռուս Եկեղեցուց, լիակատար ազատություն ու ինքնուրույնություն ուներ և հետևաբար Լեհ Եկեղեցու անկախությունն ձեռք բերելու մասին խոսք անգամ լինել չի կարող:

¹¹ «Համբավաբեր Ռուսիո», 1864, թիվ 59, էջ 1:

¹² Նույն տեղում, էջ 4:

¹³ Նույն տեղում, էջ 2:

Զ. Մսերյանը, իհարկե, հիմքեր ուներ զարմանալու, որ իրեն մեղադրում են լեհական ապստամբության պատճառը «կրոնամոլությունը» համարելու հարցում: Նախ, մա այդպես չէր մտածում և երկրորդ, մրա ընդդիմախոսը երբևէ իր կարծիքը ապստամբության պատճառների մասին չէր հայտնել: Ավելին, Պ. Սիմեոնյանը ապստամբության առաջին շաբաթների ընթացքում ստացված տեղեկությունների հիման վրա հայտնում էր, որ ապստամբության պատճառը քահանաներն են:

Եթե «Մեղու Հայաստանի» և «Համբավաբեր Ռուսիո» պարբերականների խմբագիրները լեհական ապստամբության պատճառը կրոնական հանգամանքը լինելու հարցի կապակցությամբ միմյանց հետ հրապարակավ բանավիճում էին, ապա Գ. Այվազովսկին իր պարբերականի էջերում հարկ չէր համարում անդրադառնալ այդ խնդրին: Նա ապստամբության մեջ կրոնական հարցն առհասարակ չէր արծարծում, քանի որ խորապես համոզված էր, որ լեհերի ապստամբության պատճառը ամենևին կրոնական չէր: Նա վստահ էր, որ լեհերը պայքարում են իրենց ազատության համար: Քաջատեղյակ լինելով լեհերի պայքարի նպատակին, Գ. Այվազովսկին այդ մասին հանգամանորեն չէր գրում, այլ ուշադրություն էր դարձնում առավելապես իր տեսանկյունից կարևոր համարվող խնդիրների լուսաբանմանը:

«Մասյաց աղավճին» եվրոպական երկրներում լույս տեսնող թերթերից պարբերաբար մեջբերումներ չէր կատարում, ինչպես վարվում էր «Մեղու Հայաստանին», իր դիրքորոշումը հստակ չէր արտահայտում, ինչպես «Հյուսիսն» ու «Համբավաբեր Ռուսիոն»:

«Մասյաց աղավճին» լեհական ապստամբության պատճառը կրոնական չէր համարում, քանի որ հանում հավատի պատերազմ, ըստ իրեն, կարող է ընթանալ միայն այլապես երկու ժողովուրդների միջև, իսկ միևնույն դավանանքի ժողովուրդների միջև դա քաջատու է:

Ամսագրի խմբագիր Գ. Այվազովսկին եկեղեցական բարձրաստիճան գործիչ էր, 1858 թ. մշակակվել էր Նոր Նախիջևանի և Բեսարաբիայի թեմակալ, 1867 թ. ձեռնադրվել էր եպիսկոպոս, իսկ 1871 թ.՝ արքեպիսկոպոս: Ամշուշտ, մա լավ գիտեր, որ Ռուսաստանը լեհերին կրոնական այնպիսի հալածանքների չի ենթարկում, որպեսզի մրանք ապստամբություն բարձրացնեն: Գ. Այվազովսկին հայտնի էր լեհերի ապստամբության բուն պատճառը: Նա լեհերի ըմբոստությունը բնութագրում է «ազատության մեծ գործ», որը եթե իրականանար, ապա անխուսափելիորեն կհանգեցներ ռուսական կայսրության «կերպարանափոխությանը»:

Կարծում ենք, ավելին ասել Գ. Այվազովսկին, պարզապես, չէր կարող: Եթե պատմաբան Գ. Այվազովսկին հստակ գիտեր, որ լեհերի ապստամբությունը նպատակ է հետապնդում վերականգնել լեհերի անկախությունն ու ազատությունը, ապա հոգևոր գործիչ Գ. Այվազովսկին գերադասում է այդ մասին լռել, քանի որ այն ուղղված էր ցարական Ռուսաստանի դեմ: Նրա կարգավիճակը կաշկանդում էր իրեն և թույլ չէր տալիս այդ մասին պարզ խոսել: Դրա համար էլ Գ. Այվազովսկին պարզապես ակնարկում է ապստամբության պատճառի մասին՝ եզրակացությունը թողնելով ընթերցողներին:

«Մասյաց աղավճին» վերստին անդրադառնալով լեհական հարցին՝ գրում է լեհերի պայքարի անմիաբանության և անհամախմբվածության մասին ու կատարվում է այն

կարևոր հետևությունը, որ եթե «ազգ մը քստրանքին մեջ անգամ անմիաբանությամբ կապրի, ի՞նչ պիտի լինի, եթե ազատ և ինքնագլուխ մնա»¹⁴:

Այվազովսկին չափազանց պարզ ու հստակ ընդգծում է լեհերի պառակտումը: Նա լուրջ կասկածներ ունի լեհերի հնարավոր համախմբվածության վերաբերյալ, որովհետև վստահություն չէր տածում, թե անգամ «քստրանքի» մեջ գտնվող անմիաբան ժողովուրդն ազատություն ձեռք բերելուց հետո կարող է համախմբվել՝ ընդգծելով, որ ժողովուրդը միաբանուող ու ամբողջական պիտի լինի ամենից առաջ փորձության պահին, որպեսզի կարողանա բռնցք դարձած պայքարել իր ազատության համար:

Լեհերի անմիաբանությունը մա չէր ցանկանում, որ երբևէ կրկնվի մահ հայերի համար. «Այս անմիաբանության ցավալի օրինակին,- եզրակացնում է «Մասյաց աղավմին»,- կփափագիմ բոլոր սրտով, որ չհետևի մեր ազգը ո՞վ չայծմ և ո՞վ չէլ ատենով...»¹⁵:

«Մասյաց աղավմին» յուրահատուկ մոտեցմամբ է լուսաբանում լեհական ապստամբությունը: Ֆրանսիական մամուլը լիքն էր լեհերի պայքարը մեկնաբանող մյուսերով: Ամսագրի փարիզյան թղթակիցն անտարակույս ծանոթ էր այդ լուրերին և, առանց կասկածի, դրանք հայտնում էր խմբագրությանը:

Կարծում ենք, որ Գ. Այվազովսկին այդ մյուսերից ընտրություն էր կատարում և տպագրում հատկապես մրանք, որոնք ինքը կարևորում էր: Նա ուշադրություն չէր դարձնում ապստամբության ընթացքը լուսաբանող եվրոպական մամուլի լուրերի վրա, և դրանք ուղղակի չէր արտատպում: Նա ամենից առաջ առանձնացնում էր այն իրադարձությունները, որոնցով ինքը կարող էր իր ասելիքը հայտնել ընթերցողներին:

Այսպես, ամսագիրը կարևորում էր ոչ թե լեհ ապստամբների բռնապետ Մ. Լյանգևիչի գործունեությունը, որի մասին ընդհանրապես չէր գրում, այլ մրա թիկնապահի անձը: Դիմելով հայուհիներին, խմբագիրը խանդավառ գրում է. «Դուք ալ զարմացեք և մեր վախկոտ հայուհյաց պատմեցեք: Օրինակը ավելի կազդե, քան թե խրատը: Չմոռանա՛մ ըսելու մահ զայս, որ Լանկիևիչ լեհ զորավարին անձնապահապետն ալ հայրենասեր երիտասարդուհի մըն է, Փուլթովժոսդոյ օրիորդը, որո պատերազմի մեջ ըրած քաջությունները շատ են և զարմանալի»¹⁶:

Իր զարմանքն արտահայտելով հայրենասեր օրիորդի մարտնչելու մասին, ամսագիրը հայուհիներին «խրատ» չէր տալիս: Նա հայուհիներին պայքարի բացահայտ կոչ չէր անում և ոչ էլ խորհուրդ էր տալիս հետևել լեհուհու օրինակին:

Նա հայուհիներին պարզապես անվանում է «վախկոտ» ու իր ասելիքը դրանով ավարտում՝ եզրակացությունը թողնելով ընթերցողներին:

Այնուհետև «Մասյաց աղավմին» անդրադառնում է մահ եվրոպական պետությունների դիրքորոշմանը լեհական ապստամբության ճկատմամբ, և ընդգծում, որ «Լեհաստանի խնդիրը այս օրերս քիչ մը դժվարանալու պես եղավ»¹⁷:

¹⁴ Նույն տեղում:

¹⁵ Նույն տեղում:

¹⁶ Նույն տեղում, 1863, 15 օգոստոսի, էջ 251:

¹⁷ Նույն տեղում, 15 սեպտեմբերի, էջ 282:

Անդրադառնալով Ֆրանսիայից եվրոպական պետությունների ակնկալիքներին, ամսագիրը գրում է. «Ամենում աչքը Նապոլեոնի վրա դարձած էր, թե օրենսդիր ժողովը գուցե մարած օրը /նոյեմբերի 5/ ի՞նչ խոսք պիտի արդյոք, և ի՞նչ տեսություն ընէ Լեհաստանի խնդրույն վրայոք: Այդ ճշմանավոր օրը վրա հասավ. և Նապոլեոն պարապը չհամեց եվրոպիո ակնկալությունը: Միայն Նապոլեոն կարող էր կայսերական գահին աղաղակել, թե 1815-ի դաշնագրությունը այսուհետև ոչինչ է: Եվ միայն Նապոլեոնի ձայնը կարող էր բոլոր եվրոպիո այսպիսի ծանր խոսք լսելի ընել տալ»¹⁸:

Եվ իսկապես, 1863 թ. նոյեմբերի 5-ին հանդես գալով Ազգային ժողովում, Նապոլեոն III-ը հայտարարեց, թե լեհական խնդիրը չի կարելի համարել վերջնականապես լուծված և այն համել օրակարգից, այլ հարկավոր է այդ հարցը քննարկել եվրոպայի համար կարևոր մյուս հարցերի հետ միասին: Նրա կարծիքով, Վիեննայի 1815թ. վեհաժողովի որոշումները դադարել են գործելուց, ուստի ինքը դիմում է եվրոպական բոլոր երկրներին ու հրավիրում մասնակցել Ֆրանսիայի կողմից Փարիզում հրավիրվող եվրոպական գագաթաժողովին¹⁹:

Նապոլեոնի առաջարկությունը սկզբնական շրջանում լիբերալ եվրոպայի վրա մեծ տպավորություն թողեց, և եվրոպական բոլոր երկրները շտապեցին մրան հավանություն տալ: Այն առանձնապես ուժեղ տպավորություն թողեց լեհերի վրա:

«Մալյաց աղավմին», սակայն, կասկածի տակ է դնում գագաթաժողովի կայացումը: Ամսագրի կասկածները ճիշտ դուրս եկան: Եվրոպական գագաթաժողովն իսկապես չկայացավ, որովհետև մրանից կտրականապես հրաժարվեց Անգլիան: Դրանից հետո Նապոլեոն Երրորդի առաջարկությունն ինքըստինքյան իր ուժը կորցրեց, ժամանակակիցների կողմից ստանալով «թատերական հեղաշրջում»²⁰ անունը:

«Մալյաց աղավմին» 1863 թ. վերջին լեհական ապստամբության հարցը համարում է արդեն վճռված: Ամսագիրը դա բացատրում է մաս ստեղծված միջազգային հարաբերություններով, որը պայմանավորված էր Գերմանիայի և Դանիայի մոր սկսված հակամարտությունով: Եվրոպական պետություններն իրենց ուշադրությունը դարձրեցին այս խնդրին, քանի որ այն շոշափում էր մաս իրենց աշխարհակալական շահերը, իսկ լեհական հարցից մրանք այլևս ակնկալիք չունեին:

«Մալյաց աղավմին» «1863-ին թողած և 1864-ին ընդունած հույսերը» վերնագրով հոդվածում վերլուծելով անցած տարին «... իր աղեկություններով ու գեշություններովը» հարց է տալիս, թե «ի՞նչ թողուց արդյոք այդ ճշմանավոր տարին ժամանակի մարդկանց սրտին մեջ», ի՞նչ տվեց այն եվրոպական ժողովուրդներին՝ «գաղղիացվույն, անգլիացվույն, իտալացվույն, գերմանացվույն, ռուսին, լեհացվույն, մաճառին, մոլտավիացվույն, հայուն, ամերիկացվույն և այլն և այլն»: «Մալյաց աղավմին» չէր գտնում, թե 1863 թվականը այս ժողովուրդներից որևէ մեկին բերել է հաջողություն կամ բարեկեցություն, ուստի իր իսկ հարցադրմանը պատասխանում է՝ «հույս, հույս, հույս և ուրիշ ոչինչ»²¹:

¹⁸ Նույն տեղում, 1863, 15 նոյեմբերի, էջ 345:

¹⁹ М. В. Мяско, Указ., соч., стр. 297.

²⁰ М. В. Мяско, Указ., соч., стр. 298.

²¹ «Մալյաց աղավմին», 1864, 13 հունվարի, էջ 17:

Լեհերի ազատագրական պայքարն, ըստ Գ. Այվազովսկու, ի դերն եղավ, քանի որ նրանք համախմբված չէին ու նրանց հուսախաբ արեց ֆրանսիական դիվանագիտությունը:

Ուշագրավն այն է, որ վերը նշված հոդվածում Գ. Այվազովսկին անդրադառնում է նաև հայությանը և վերլուծում, թե անցնող 1863 թ. ինչ տվեց հայության երկու հատվածներին:

Նրա կարծիքով արևմտահայության համար «շատ մեծ բան էր իրենց Սահմանադրության վերջապես հաստատվելը»: Այս տեսակետից 1863 թ. հայ ժողովրդի «արդի պատմության մեջ ամոռոհանալի տարի պիտի լինի», քանի որ արևմտահայությունն «այս Սահմանադրությամբ այսուհետև գոնե ըստ մերքին գործոց ինքզինքը կառավարելու» հնարավորություն ստացավ:

Ազգային սահմանադրությունը արևմտահայության մերքին կյանքին վերաբերվող մի կանոնադրություն էր: Իր բոլոր թերություններով հանդերձ այդ սահմանադրությունը սուլթանական Թուրքիայի դժնդակ տիրապետության պայմաններում առաջադիմական երևույթ էր այնքանով, որ արևմտահայությանը հնարավորություն էր տալիս ինքնուրույն որոշել մերքին ինքնակառավարման, կրոնական, սոցիալական, կրթական հարցերը:

Այնուհետև նա գրում է, որ «Ռուսաստանի հայերը ուրախությամբ մայեցին իրենց հայրենակցաց այս երջանկության վրա, բայց շատ մախանձելու պատճառ չունեցան, որովհետև իրենք արդեն, գոնե շատ գավառներու ու քաղաքներու մեջ մույմպիսի ազատություններ կվայելեին ու կվայելեն»²²:

Սրանով Գ. Այվազովսկին ընդգծում է այն միտքը, որ Ռուսաստանի կազմում ապրող արևմտահայերն իրենց համայնքներում վաղուց վայելում էին այն «ազատությունները», որ ստացել են արևմտահայերը տարիների պայքարից հետո:

Նշելով, որ 1863 թ. հայությանը սրանից զատ մշակակալից բան չի տվել, Գ. Այվազովսկին հույս է հայտնում, որ առաջիկա տարիները «հետզհետե գործնական և իրական առաջադիմություն պիտի բերեն ազգին: Ընեմք ուրեմն բոլոր սրտանց, թե Աստված չամըչցնե զմեզ»²³:

«Մայայց աղավին» նաև պարբերաբար լուսաբանում էր ԱՄՆ-ի անկախության պատերազմը, իտալական, հունգարական, մեքսիկական և լեհ ժողովուրդների ազատագրական պայքարը:

Լեհական ապստամբության մասին եթե Գ. Այվազովսկին գրում է չեզոք դիրքերից, ապա իտալական ժողովրդի ազատագրական պայքարը լուսաբանում է անկաշկանդ և անգամ համակրանքով: Նա փառաբանում է Ֆրանս-սարդինական զորքերի տարած հաղթանակը Ավստրիայի դեմ, որ «ամմահացուցին պատմության մեջ» և ափսոսանք հայտնում, որ «այնչափ փառավորությամբ» սկսված պատերազմն «անակնկալ կերպով վերջացավ՝ առանց իտալիո ազատության խնդիրը լուծելու»²⁴: Գ. Այվազովսկին իտալիայի միավորման խնդիրը համարում է իտալական ողջ ժողովրդի «բաղձանքը»²⁵ և «մեծ նպա-

²² Նույն տեղում, 1864, 15 փետրվարի, թիվ 1, էջ 17:

²³ Նույն տեղում:

²⁴ Նույն տեղում, 1860, թիվ Բ, փետրվար, էջ 57:

²⁵ Նույն տեղում, թիվ ԺԲ, 15 հունվարի, էջ 144:

տակ»²⁶։ Նա ընդգծում է իտալական ժողովրդի ազատատենչության «փափաքը», մշում, որ իտալական թագավորության հռչակումը դեռևս իտալիայի միավորման ավարտը չէ, քանի դեռ Հռոմն ու Վենետիկը մրա կազմում չեն²⁷։

Գ. Այվագովսկին ըստ արժանավույն գնահատում է Վիկտոր Էմմանուել II-ին և Կալոլին²⁸, իսկ Գարիբալդին ամվանում է իտալիայի ժողովրդի «հրաշալի ազատարար»²⁹, հիացական խոսքեր գրում ոչ միայն մրա պայքարի, այլև անգամ արտաքին տեսքի մասին։

Նույն ամկաշկանդ ոճով և առանց ակնարկների Գ. Այվագովսկին անդրադառնում է մահ ավստրիական կայսրության դեմ լեհերի պայքարին։ Պատմելով կայսրությունից դժգոհ Գալիցիայի լեհերի մասին, Գ. Այվագովսկին պարզորոշ հայտնում է լեհերի մպատակը։ Լեհական մի պատգամախոսը, տեղեկացնում է մա, ժամանել է Վիեննա, «որպեսզի իրենց երկրին համար ամեն կարգի ազատություն պահանջեն և Կալիցիո ու Քրակովի բոլորովին միավորվիլը խնդրեն»³⁰։

Կայսրությունում ապրող հունգարացիների վիճակը Գ. Այվագովսկին համարում է ոչ առաջվանը։ Եթե մախկնում հունգարացիները պահանջում էին որոշակի ազատություններ, ապա «այժմ ուղք կոխեր են, որ բոլորովին ազատ տերություն լինեն» անկախ Ավստրիո կառավարութենեն, այնպես որ միայն ամուսնով մա Ավստրիո կայսրը թագավոր Մաճառաց»³¹։

Գ. Այվագովսկին ճիշտ է մեկնաբանում հունգարացիների պայքարի մպատակը։ Ի վերջո հունգարացիները հասան իրենց մպատակին. 1867 թ. ստեղծվեց Ավստրո-Հունգարական միացյալ պետություն, որի կայսր Ֆրանց-Իոսիֆը միաժամանակ Հունգարիայի թագավորն էր։

Հատկաճանակամն այն է, որ այդ մասին Գ. Այվագովսկին գրում է մոր պետության կազմավորումից վեց տարի առաջ։ Նա 1860 թ. կարևորագույն իրադարձություններից մեկը համարում է Անգլիայի և Ֆրանսիայի կողմից Պեկինը մվաճելը։ Նշելով, որ մրամք Զիճաստանից «անքալ հարստություն» են տարել, միաժամանակ փաստում է այն ճշմարտությունը, որ «Զիճաց տերությունը իրեն 200 միլիոն բնակչովը չկրցալ դեմ կենար»³²։ Գ. Այվագովսկին կարևորում է Աբրահամ Լինքոլնի ԱՄՆ մախազաի ընտրվելը։ Ամվանելով մրան «խելացի մարդ», այնուհետև գրում է. «Այժմ տարակույս չկա, որ Լինքոլնին մախազահության ժամանակը պիտի վերացվի բոլորովին գերելաճառությունը»³³։

Գ. Այվագովսկու այս համոզմունքն էլ իրականություն դարձալ։ ԱՄՆ-ում 1863թ. հունվարի 1-ից վերացվեց ստրկությունը։ Այնպես որ համաշխարհային պատմությանը գիտակ Գ. Այվագովսկին, անկասկաճ, լալ գիտեր մահ լեհերի ապստամբության բուն պատճառն ու հետապնդաճ մպատակը։

²⁶ Նույն տեղում, թիվ ԺԱ, էջ 181։

²⁷ Նույն տեղում, 1861, թիվ Գ, 1 փետրվարի, էջ 35, թիվ Ե, 1 մարտի, էջ 58։

²⁸ Նույն տեղում, 1861, թիվ ԺԳ, 1 հուլիս, էջ 156։

²⁹ Նույն տեղում, 1860, թիվ Ժ, էջ 165։

³⁰ Նույն տեղում, 1861, թիվ Դ, 15 փետրվարի, էջ 47։

³¹ Նույն տեղում, 1861, թիվ ԺԲ, 15 հունիսի, էջ 144։

³² Նույն տեղում, թիվ Գ, 15 հունվարի, էջ 23։

³³ Նույն տեղում։

«Մայաց աղավնու» էջերում Գ. Այվազովսկին պարբերաբար անդրադառնում է նաև պատմական այնպիսի դեմքերի, ինչպիսիք էին Պետրոս Մեծը, Նիկոլայ I-ը, Նապոլեոն Բոնապարտը, Բենեմեն Թրամկլինը, Ջորջ Վաշինգտոնը, Աբրահամ Լինքոլնը, Օգյուստեն Թիերին և ուրիշներ:

Գ. Այվազովսկին լավ էր հասկանում, որ ճնշված ժողովուրդները չեն կարող հաղորդակից լինել եվրոպական առաջադիմությանը, մինչև ազատություն ձեռք չբերեն: Նրա համոզմամբ «Լեհացիք 1863-ը մեծ հույսով սկսան», որպեսզի հասնեն ցամաքային ազատության, բայց հուսախաբ եղան: Ազատության համար պայքարող լեհերի «Մեջերեն խոսեմներն ու բան հասկացողները հույս ունեին, թե Ռուսաց տերությունը սիրով կընդունի իրենց խոնարհական հայտարարություններն ու երբոր բոլորովին համոզարտի երկիրը՝ շատ ազատություններ կուտա իրենց»,³⁴ գրում է Գ. Այվազովսկին:

Սակայն, եթե լեհերի պայքարի մասին նա ակնարկներով է խոսում, ապա չափազանց պարզ ու հստակ դիրքորոշում ունեն իտալացիների ազատագրական պայքարի մկատմամբ: Գ. Այվազովսկին Իտալիայի միավորումը ավարտում էլ էր համարում առանց Հոռմի և Վենետիկի ու բազմիցս ընդգծում էր, որ իտալացիների «բաղձանքն» ու «փափագն» է Հոռմը դարձնել իտալական թագավորության մայրաքաղաք³⁵:

Ուղղակի հայտնել իր ցանկությունը, թե Հոռմը ի վերջո պիտի լինի իտալական թագավորության մայրաքաղաքը, հոգևոր գործիչ Գ. Այվազովսկու համար ճշմանկում էր հակադրվել Հոռմի պապի իշխանությանը: Դրանից խուսափելու համար նա ամսագրում տպագրում է Ֆրանսիայի սենատի անդամ իրավաբան Դյուպորի ճառը: Նրանում ասվում էր, որ «Հոռմի պապի աշխարհիկ իշխանության դեմ խոսելը հերետիկոսություն չէ և Եկեղեցուն դեմ չէ»³⁶:

Գ. Այվազովսկին դատապարտում էր հայ հոգևորական այն գործիչներին, ովքեր ժամանակին մպաստեցին Լեհաստանում և Հունգարիայում հայության կրոնափոխությանը:

«Լեհաստանում հայկազանց մեկ մեծ քայլը դեպի հայկական ազգայնություն» վերնագրով հոդվածում Գ. Այվազովսկին գրում է այն մասին, որ երկու հարյուր տարի շարունակ Լեհաստանում ապրող հայերն իրենց ազգությունը գրեթե մոռացած «այժմ աներկյուղ համարձակությամբ ձեռք առել են ազգության դրոշակը և առանց վախճալու Նիկոլի դրած մզովքներեն և մորա պաշտպան հոռվմեական փրոփականտային սպառնալիքներեն, ահագին քայլ մը առեր են դեպի ազգային հոգին»: Այդ կարևոր քայլը Գ. Այվազովսկին համարում է այն, որ «Նիկոլի պես ազգատյաց եկեղեցականաց ձեռքը» իրենց դավանանքն ու հոգևոր արարողությունները փոխած լեհահայերը մերկայումս ցանկանում են «իրենց ազգային Եկեղեցվո մեջ գոնե իրենց ազգային ծեսերը մորոգել»³⁷:

Գ. Այվազովսկին մկատի ուներ Լվովի հայոց հոգևոր առաջնորդ Նիկողայոս Թորոսյանին՝ տխրահոռչակ Նիկոլ Թորոսովիչին, որը բացահայտ անցավ Կաթոլիկ Եկեղեցու

³⁴ Նույն տեղում, 1864, 13 հունվարի, էջ 19:

³⁵ Նույն տեղում, 1860, թիվ ԺԱ, էջ 181, 1861, թիվ ԺԲ, էջ 144 և այլն:

³⁶ Նույն տեղում, 1860, թիվ Ժ, էջ 165:

³⁷ Նույն տեղում, 1864, թիվ 17, 1 սեպտեմբերի, էջ 267:

կողմը և կաշառքի ու բռնությունների ճանապարհով մպաստեց լեհահայերի բռնի կաթոլիկացմանը³⁸:

Գ. Այվազովսկու ատելությունն ու արգահատանը Թորոսովիչի մկատմամբ այնքան ակնհայտ է, որ հոդվածում մրան իրավացիորեն անվանում են «ազգատյաց» և հիշատակում սոսկ որպես Նիկոլ:

Նա խստորեն դատապարտում է մահ Վարդան Հունանյանին, որը հունգարահայ գաղթավայրերում հեմվելով Հոսմի պապին հավատարիմ ուժերի վրա, խոստումների, սպառնալիքների և զանազան բռնությունների միջոցով հունգարահայ բնակչությանը ստիպել տվեց կաթոլիկություն ընդունել: Դրանով մա կատարեց ճիշտ մույն դերը, ինչ կատարել էր վատամուն Նիկոլը Լեհաստանի հայ գաղթավայրերում:

Գ. Այվազովսկին մեղքող էր ձոնում Նիկոլայ I ցարին և դատապարտում էր ռուս դեկաբրիստների ապստամբությունը³⁹, բայց և ոգևորված չէր լեհական ապստամբության ճնշումով: Սա մրա դիրքորոշումն էր, որը շատ դեպքերում չեզոք ու անկողմնակալ էր, իսկ առանձին դեպքերում՝ երկակի: Նա կարող էր գովաբանել թե՛ եվրոպական միապետերի և թե՛ ազատագրական պայքարի աննկուն հերոս Գարիբալդուն:

Ինչ վերաբերվում է արմատական դեմոկրատներին, ապա մրանք լեհական 1863 թ. ապստամբությանը հրապարակայնորեն չանդրադարձան: Ապստամբության տարիներին Մ. Նալբանդյանը ձեռքակալված էր: Մնացած գործիչները լեհական ապստամբությունը առհասարակ չլուսաբանեցին:

³⁸ Տե՛ս Բոնի միություն հայոց Լեհաստանի ընդ եկեղեցվոյն Հոովմայ: Ժամանակակից հիշատակարանը: Առաջաբան Կ. Եզլանի, Ս. Պետերբուրգ, 1884:

³⁹ «Մաայաց Աղավմի», 1855, թիվ 3, էջ 70: